2026 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎՈՒՄ

KONRAD ADENAUER STIFTUNG

CAUCASUS INSTITUTE

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գյումրի · Գորիս · Եղեգնաձոր

1. Նպատակ և շրջանակ

Գյումրի, Եղեգնաձոր և Գորիս քաղաքներում կազմակերպված հանդիպումների շրջանակը Հայաստանի արտաքին քաղաքականության, խաղաղության գործընթացի, 2026 թ. ընտրությունների սպասվող օրակարգերի շուրջ էին:

Նույն թեմատիկ տեքստը երեք բնակավայրում ներկայացվեց տարբեր ենթատեքստերով.

- **Գյումրիում** դա ավելի շատ արտաքին-ներքին քաղաքականության փոխկապակցման, խաղաղության մոդելների մրցակցության և քաղաքական պատասխանատվության քննարկում էր՝ մասնակցային, հարցադրող ու վիճարկող տրամաբանությամբ:
- **Եղեգնաձորում** նույն թեման ավելի շատ դասախոսություն էր նոր սերնդի համար՝ քաղաքական սոցիալականացման վաղ փուլ, որտեղ խաղաղության, պատմական արդարության ու «Զանգեզուրի միջանցքի» մասին հարցերը ավելի շատ արժեքային էին, քան քաղաքական:
- **Գորիսում** քննարկումն անցնում էր ուժեղ անվտանգային և վախի ֆիլտրով. Սյունիքը որպես խոցելի տարածք ստեղծում էր զգուշավոր, բազմակետ լռությամբ նշանավորվող դաշտ:

2. Մասնակիցների կազմը

- **Գյումրի** - բազմաշերտ և հաճախ քաղաքականապես հասուն խմբեր՝ ՏԻՄ, ՔՀԿ-ներ, «քաղաքական ակումբ», փորձառու ակտիվիստներ, ուսանողներ:

  Այստեղ կուտակված է **քաղաքական փորձ**. մարդիկ սովոր են խոսել, վիճել, կասկածել, անվստահել, բայց նաև կառուցել փաստարկ:

- **Եղեգնաձոր** - դեռահասներ և փոքրաթիվ մեծահասակներ

  Սա միակ վայրն է, որտեղ խոսքը թիրախավորում է **դեռևս քաղաքականապես չձևավորված սերունդը**: Քննարկումն այստեղ շատ ավելի բաց է՝ որպես **քաղաքացիական կրթության պրակտիկա**, ոչ թե քաղաքական դեբատ:

- **Գորիս** - երիտասարդ, բայց զգուշավոր լսարան

  Հիմնականում համալսարանի և քոլեջների ուսանողներ. Քաղաքական գիտելիքը կարծես կա, բայց սահմանափակեն արտահայտվում:

3. Քննարկման դինամիկա. լռություն, բանավեճ, դասախոսություն

- **Գյումրի - բարձր ինտենսիվություն, բանավեճային միջավայր**

  Մասնակիցները չեն սահմանափակվում հարց տալով. նրանք «մտնում են» բանախոսների հետ նույն դաշտ, վիճարկում են, վերաձևում են թեման (օրինակ՝ զրույցի տեղափոխումը սոցիոլոգիական հարցումների մեթոդաբանության դաշտ), սարկաստիկ են, հաճախ հումորով են ակնարկում պաշտոնական/միջազգային խոսույթը («Թրիփ և Թրամփ»):

- **Գորիս - լուռ, զգուշավոր, դիտորդական միջավայր**

  Քննարկումը ընթանում է **շատ ուշադրությամբ, բայց քիչ ձայներով**: Հարց տալը հավասար է քաղաքական դիրքավորման և ռիսկի. այստեղ քաղաքական խոսքն այլևս միայն «մտքերի փոխանակում» չէ, այլ կապված է գոյաբանական ռիսկի զգացողության հետ (սահման, ճանապարհ, անվտանգություն):

- **Եղեգնաձոր - ուսուցողական, «դասախոսական» ձևաչափ**

  Լսարանը սկզբում գրեթե չի խոսում. քաղաքական հարցը ընկալվում է որպես «մեծերի աշխարհ», իսկ բանախոսները՝ որպես գիտելիքի կրողներ:

Այս համադրությունը ցույց է տալիս, որ ֆորմալ նույն ձևաչափը (քաղաքային երկխոսություն) իրականում **երեք շատ տարբեր հաղորդակցական ռեժիմների** է վերածվում՝ կախված վայրից, սերնդից, ռիսկի ընկալումից և նախապես ձևավորված քաղաքական մշակույթից:

4. Խաղաղության ընկալումներ. երեք տարբեր հարթություն

Գյումրի - խաղաղություն որպես մրցակցող մոդելների քաղաքական խնդիր

Գյումրիում խաղաղությունը ընկալվում է

- որպես **քաղաքական մոդել**, ոչ թե միայն փաստաթուղթ,
- որպես **ընտրությունների առանցք**՝ որ մոդելին ես վստահում, ոչ թե միայն ում ես «սիրում/չես սիրում»:

Հարցերն այստեղ ուղղված են՝

- խաղաղության գնի,

- դրա տնտեսական հիմքերի,
- և ամենակարևորը՝ **ով է ձևավորում խաղաղության օրակարգը և ըստ ինչի** (այստեղ է, որ սոցիոլոգիական հարցումների նկատմամբ անվստահությունը դառնում է առանցքային):

Եղեգնաձոր - խաղաղություն, պարտություն և պատմական արդարություն

Եղեգնաձորում խաղաղության շուրջ ձևավորվում է հետաքրքիր եռանկյուն.

- «Խաղաղության արժեքն ինչո՞վ է չափվում»,
- «Ստորագրված խաղաղությունը խաղաղությո՞ւն է, թե՞ պարտության ֆիքսում»,
- «Պատմական արդարությունն ինչպե՞ս է տեղավորվում խաղաղության մեջ»:

Այս հարցերը ցույց են տալիս, որ դեռահասների մոտ խաղաղությունը **անմիջապես համադրվում է պարտության, արդարության, արժանապատվության հետ**:

Գորիս – խաղաղությունը որպես անվտանգային ռիսկ ու գոյաբանական հարց

Գորիսում խաղաղությունն արդեն

- **սահմանների**,
- միջանցքի,
- անվտանգության,
- և «կհասնե՞ն մինչև մեզ» հարցի խնդիր է:

Հարցերը գործնական են, ոչ թե արժեքային.

  – «ինչպե՞ս կառավարել միջանցքով անցնող ապրանքները»,
  – «Հայաստանը փորձում է՞ ժամանակ շահել»,
  – «պետք է՞ փոխել լեզուն՝ թշնամու փոխարեն ասել հակառակորդ»:

5. Վստահության ճգնաժամը

Վստահության/անվստահության թեման երեք տեղում էլ առկա է, բայց շատ տարբեր ձևերով.

- **Գյումրի - կառուցվածքային անվստահություն ինստիտուտների նկատմամբ**

  Այստեղ անվստահությունը ինտելեկտուալացված է. չեն վստահում սոցիոլոգիական հարցումներին, քաղաքական դերակատարներին, ինֆորմացիայի «պատվիրատուներին», բայց դա վերածվում է **քննադատական ռեֆլեքսիայի**: Հարցն է՝ «ով, ինչու, ինչպես, երբ է տեղեկացնում հասարակությանը»:

- **Եղեգնաձոր - անվստահություն առանց հասցեատիրոջ**

  Դեռահասների հարցերում կա զգացողություն, որ

  - «մեծ տերությունները մեզ չեն պաշտպանում»,
  - «ԱՄՆ-ը կօգնի՞, եթե մեզ վտանգ սպառնա»,

  բայց այստեղ դեռ չկան հստակ ձևակերպված հասցեատերեր ու ինստիտուցիոնալ վերլուծություն:

- **Գորիս - անվստահություն որպես ինքնաքննության ֆոն**

  Այստեղ վստահության պակասը ավելի քիչ արտահայտվում է խոսքի մակարդակում և ավելի շատ՝ **լռության մեջ**:

  Մարդիկ գիտեն, որ «ոչ ոքի ամբողջությամբ վստահել չի կարելի», բայց այն, ինչ Գյումրիում վերածվում է բաց քննադատության, Գորիսում վերածվում է ինքնաքննության և չարտահայտված մտահոգության:

6. 2026 թ. ընտրությունների ընկալում

Բոլոր երեք հանդիպումներում ընտրությունների շուրջ ընկալումները *արմատապես* տարբեր է:

- **Գյումրի** - ընտրությունները՝ որպես «խաղաղության մոդելների միջև վստահության մրցակցություն»: Այստեղ մարդիկ իրենց տեսնում են որպես համեմատաբար ակտիվ քաղաքական սուբյեկտ. ընտրողը ոչ միայն ընտրում է կուսակցություն, այլ այն մոդելը, թե ինչպես պետք է Հայաստանը «մտնի» խաղաղության փուլ:
- **Գորիս** - ընտրությունները որպես «վերևում» որոշվող գործընթաց: Այստեղ ընտրությունները ավելի շատ ընկալվում են որպես «գոյաբանական գործընթաց, որի ելքը որոշվում է «վերևի» մակարդակում»: Անձնական ազդեցության զգացումը նվազ է, մոտիվացիան՝ թույլ:
- **Եղեգնաձոր** - ընտրությունները որպես «մեծերի խաղ»: Դեռահասների համար ընտրությունները դեռևս իրենց կյանքի հետ ուղղակի կապ չունեն.

7. Համեմատական դիտարկումներ և հնարավոր եզրակացություններ

Դիտարկումների մակարդակում (ոչ որպես ամբողջական սոցիոլոգիական եզրակացություն) կարելի է նշել մի քանի միտում.

1. **Քաղաքական խոսքի ձևը ուժեղ կախված է անվտանգության շուրջ լոկալ պատկերացումներից և պատմական փորձից**

- Սյունիքի սահմանամերձ խոցելիության պայմաններում (Գորիս) գերակշռում է լռությունն ու զգուշավորությունը:
- Գյումրիում՝ սոցիալ-տնտեսական խոցելիությունը և ուժեղ քաղաքացիական դաշտը միասնաբար արտադրում են **քննադատական, հաճախ հեգնական, բայց բարձր ակտիվ խոսք**:
- Եղեգնաձորում՝ փոքր, ավելի «հեռու» մարզային «դպրոցական» միջավայրը ստեղծում է ուսուցողական, գուցե նույնիսկ պաշտպանվող դաշտ. նախ պետք է հասկանալ, նոր խոսել:

2. **Խաղաղության շուրջ դիրքորոշումները հաճախ հակառակ համեմատական են քաղաքական փորձին**
    - Եղեգնաձորի դեռահասների «խաղաղություն - պարտություն - պատմական արդարություն» եռանկյունը փաստում է խոր արժեքային զգայունության մասին, բայց առանց գործիքակազմի:
    - Գյումրիում խաղաղությունը ավելի շատ դառնում է քաղաքական մոդելների, ընտրությունների, պատասխանատվության հարց:
    - Գորիսում՝ անվտանգության, գոյության, ֆիզիկական անվտանգության հարց:
3. **Վստահության ճգնաժամը համատարած է, բայց տարբեր «լեզուներով» է արտահայտվում**
    - Գյումրի - ինտելեկտուալ, կառուցվածքային քննադատություն (սոցիալական հարցումներ, ինստիտուտներ, հաղորդակցություն)
    - Գորիս - լռություն, ինքնագրաքննություն
    - Եղեգնաձոր - զգացողության մակարդակի անվստահություն մեծ տերությունների նկատմամբ
4. **Քաղաքական սուբյեկտայնությունը տարածականորեն և սերնդային առումով անհավասարաչափ է բաշխված**
    - Գյումրիի խմբում մենք տեսնում ենք ձևավորված, քննարկող, կասկածող, բայց նաև պատասխանատվություն գիտակցող սուբյեկտներ:
    - Գորիսում՝ ինֆորմացված, բայց պասիվ, վտանգից զգուշացող սուբյեկտներ:
    - Եղեգնաձորում՝ սուբյեկտայնությունը դեռ «կառուցվող» փուլում է՝ դպրոցականների սերնդի մակարդակում:

8. Ինչի համար են օգտակար այս երեք հանդիպումները

Մեկ նախադասությամբ՝ այս հանդիպումները ցույց են տալիս ոչ թե «ինչ են մտածում Գյումրիում, Գորիսում կամ Եղեգնաձորում», այլ **ինչպես տարբեր սոցիալական կազմ ունեցող խմբերը նույն թեմային մոտենում են տարբեր քաղաքական և էմոցիոնալ լեզուներով**:

Սա կարևոր հուշում է՝

- թե քաղաքական հաղորդակցություն պլանավորելու համար (վերբալ շտեմարան, լեզվի մակարդակ, ռիսկի զգացողություն),
- թե քաղաքացիական կրթության և մանավանդ **խաղաղության կրթության** մոդուլներ մշակելու համար,
- և թե հետագա, արդեն ավելի համակարգված սոցիոլոգիական հետազոտություն նախագծելու համար, որտեղ այս երեք «տիպական դրվագները» կարելի է օգտագործել որպես հիպոթեզների առաջադրման հիմք, ոչ թե վերջնական պատասխան: